Արձանագրություն հ. 9

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 09.11.21թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էր ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար պատմական գիտությունների դոկտոր Հ.Հովհաննիսյանը

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 38 անդամներից 27-ը:

Նիստը նախագահում էր տնտեսագիտության թեկնածու Գ.Բարխուդարյանը:

Օրակարգում՝

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (զեկուցող՝ դեկան Հ.Սարգսյան):

Բացելով նիստը նախագահողը ձայնը տվեց ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Սարգսյանին, որը ներկայացրեց մեկ տարում ֆակուլտետի գործունեության արդյունքները /զեկուցումը կցվում է թղթապանակային ձևով/:

Նա հիմնական ուշադրությունը դարձրեց կրթական գործընթացում տեղի ունեցած փոփոխությունների վրա. վերանայվել են ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական որոշ ծրագրերի ուսումնական պլանները և առանձին դասընթացների առարկայական ծրագրերը, ընդ որում դա շարունակական է լինելու:

Զեկուցող անդրադարձ կատարեց հաշվետու տարում ամբիոնների գործունեությանը, ֆակուլտետի միջազգային կապերին, նշելով դրական կողմերը և բացթողումները, նաև կարևորելով գիտական հետազոտություններում դասախոսական անձնակազմի մասնակցության աստիճանի բարձրացմանը:

Արտահայտվեցին.

ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատար, Հ.Հովհաննիսյանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Վ.Խաչատուրյանը, կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ Կ. Խաչատրյանը, տնտեսագիտության թեկնածու Կ.Ավետիսյանը:

Նրանք բոլորն էլ դեկանի մեկ տարվա կատարած աշխատանքը գնահատեցին բավարար:

Բաց քվեարկությամբ որոշեցին տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ.Սարգսյանի մեկ տարվա կատարած աշխատանքը համարել բավարար:

Նիստի նախագահ.
տ.գ.թ. Գ.Բարխուդարյան

Գիտխորհրդի քարտուղար
տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Համբարձումյան